ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

03 մայիսի 2017 թվականի N 60-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Վարդան Աղբյուր» ՍՊ ընկերության՝ ՀՀ Շիրակի մարզի Կամոյի դացիտային տուֆերի հանքավայրի շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի՝ ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 23-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 27 և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի փետրվարի 06-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 217 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի ապրիլի 10-ի թիվ Ֆ-101/17 գրությունը, «Վարդան Աղբյուր» ՍՊ ընկերության 2017 թվականի հունվարի 20-ի թիվ 1/3 դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. «Վարդան Աղբյուր» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) ՀՀ Շիրակի մարզի Կամոյի դացիտային տուֆերի հանքավայրում արդյունահանում կատարելու համար 2012 թվականի նոյեմբերի 06-ի թիվ ՇԱԹՎ-29/294 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել՝ սահմանելով .մինչև 2067 թվականի մայիսի 12-ը:

1) «Վարդան Աղբյուր» ՍՊ ընկերությանը տրամադրված ՀՀ Շիրակի մարզի Կամոյի դացիտային տուֆերի հանքավայրում արդյունահանման նպատակով տրամադրված «ARM WGS-84» կոորդինատային համակարգի՝ **1.**X=4418549.2 Y=8413281 H=1772 (-26.2); **2.**X=4418485.2 Y=8413340.2 H=1767.3 (-24.5); **3.**X=4418449 Y=8413302 H=1761 (-22.4); **4.**X=4418519 Y= 8413235 H=1775 (-32.5) կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ **1.**X=4519421,0 Y=8414440,0; **2.**X=4519472,0 Y=8414569,0; **3.**X=4519396,0 Y=8414613,0; **4.**X=4519326,0 Y=8414489,0

(տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված 1.37 հա տարածք, մարվող՝ 370 321,0 մ^3, մնացորդային պաշարներով տեղամասը,

2) Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 6406,0 մ^3 մարվող պաշար,

3) 2012 թվականի նոյեմբերի 06-ի թիվ ԼՎ-294 լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքն ընդլայնել, տրամադրելով՝ **1.**X=4519436 Y=8414430 H=2077.8; **2.**X=4519483 Y=8414506 H=2089.0; **3.**X=4519494 Y=8414544 H=2089.3; **4.**X=4519481 Y=8414695 H=2092.0; **5.**X=4519354 Y=8414681 H=2092.6; **6.**X=4519328 Y=8414631 H=2083.8; **7.**X=4519300 Y=8414485 H=2063.9; **8.**X=4519324 Y=8414424 H=2072.7 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված 4,16 հա տարածք:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության հետ 2012 թվականի նոյեմբերի 06-ին վերաձևակերպված թիվ ՊՎ-294 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ